ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբեր 2023 թվականի N: 504-Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N:1657-Ն որոշման և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից դիմումի ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1212 «Տարածքային զարգացում» ծրագրի 12030 «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ Շիրակի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով քաղաքացի Արթուր Արզումանյանին /ք.Գյումրի, Մայակովսկի փողոց, տուն 96, գրանցմամբ ԼՂՀ/ հատկացնել 50000/հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Իսկականի հետ ճիշտ է